

Հոս միջանկեալ դիտել տամ, որ Շահ Աբբասէն առաջ արդէն հում մետաքսի առեւտուրը հայոց ձեռքն էր, ինչպէս նաեւ Գիլանը Շահ Աբբասի օրերէն շատ առաջ մետաքս կ'արտադրէր մեծ եւ առաջնակարգ քանակութեամբ:

Թուրքֆօր կ'ըսէ, որ Նոր Ջուղայեցիք մետաքս եւ պարսկական ուրիշ ապրանքներ Նոսափա Կասպիան նաւահանգիստը կը տանէին եւ Աստրախանի եւ Ռուսիոյ վրայով Եւրոպա կը տանէին: «Աստրախանէն ցամաքի ճանապարհով այդ ապրանքները կը տարուէին Մոսկուա եւ անկէ Արխանկէլ, Ռուսիոյ հեռաւորագոյն նաւահանգիստը, Հիւսիսային ծովուն վրայ: Անգլիացիք եւ Հոլանտացիք այդ նաւահանգիստին հետ մեծ առեւտուր կ'ընէին: Հոնկէ ապրանք կը զրկէին Սթոքհոլմ, եւ անկէ էլ զինոր նեղուցէն ատոնք կը տարուէին Անգլիա եւ Հոլանտա»:

«Հօլլանդայնի դուքս Ֆրէտէրիքը, ըստ Օլիարիւսի, հիմնարկեց Հօլլանդայնի դքսութեան մէջ Ֆրէտէրիքըլատը՝ Եւրոպայի

իրենք առեւտուրի մէջ Հրեաներուն չափ նշանաւոր են: Սակայն, իրենց համբաւին անհունապէս նպաստող կէտը առեւտուրի իրենց կերպն է եւ միջնորդի իրենց գործելակերպը, որ իրենց նկարագրերը քիչ իսկ չէ խաթարած, Ժուժկալութեան եւ ուղղամտութեան մէջ, որովհետեւ անոնք ժիր են եւ համեստ ու ինքնաբաւ, համեստ շահով կը գոհանան եւ հաւատարմութեամբ կը ծառայեն, եղբօր նման գիրար կը սիրեն եւ իրենց հաստատուած երկիրներուն չափազանց օգտակար են»:(Անդ:)

Գոնէ մեր օրերուն համար դնահատական այս խօսքերը մեր մասին չափազանցութիւն կ'երեւան: Կ'երեւայ թէ Հարրիսի օրերէն ի վեր (դրեթէ 200 տարի վերջ) շատ բան կորսւնցուցած ենք, ոչ միայն մեր դիրքէն, այլեւ մեր նկարագրէն: Գալով «եղբօր նման» զիրար սիրելիութեամբ հիմա դրուէր, կարծեմ արդարօրէն հեղանք մը պիտի նկատէինք մեզի դէմ: Այսօր հրապարակով իրար կը մատնենք անհեթեթ զրպարտութիւններով կամ կը փորձենք զիրար մատնել:

որեւէ մէկ ուրիշ տեղէն աւելի նշանակելի հում մետաքսի առեւտուր հոն հաստատելու համար: Այս նպատակով որոշեց թղթակցիլ Պարսից թագաւորին հետ, որպէսզի ան դիւրացընէ ցամաքային բեռնատարութիւնը: Բայց ասիկա գործնական չէր առանց Մոսկուայի Մեծ Դուքսին թոյլատուութեան: Ուստի ան 1633-ին յարմար սեպեց հանդիսաւոր դեսպանութիւն մը զրկել՝ ատոր պաշտօնը տալով Գրուշիուս խորհրդականին եւ Համպուրկցի Պրուկման անունով վաճառականին: Այս վերջինը իր վատ մատակարարութեամբ եւ Դաղեստանի թաթարներու մէջէն անցնելու առթիւ ենթարկուեցաւ վտանգներու, եւ ծրագրերը վիժեցաւ: Ան (Պրուկման) յետոյ զեղծարարութեան համար մահուան դատապարտուեցաւ եւ սպաննուեցաւ Կօղբօրի մէջ 1640, մայիս 5-ին: Հոլանտացիք անկէ ի վեր փորձեցին տիրանալ Աստրախանէն եկող Պարսկական մետաքսին՝ ըստիպուած ամէն տարի մեծ քանակութեամբ դնելով: Ասոր պատճառաւ այդ առեւտուրէն շատ չեն շահիր, որովհետեւ հայերը զանոնք կը ստիպեն լաւն ու գէշը միատեղ առնել»:1)

1) A Voyage into Levant, էջ 233: Օլարիւս կարեւոր տեղեկութիւններ կուտայ մետաքսի առեւտուրի մասին: «Մետաքսը, Պարսկաստանի մէջ փառունտը կ'արժէ աւելի քան 2 շիլինկ վեց փէնս կամ 2 շիլինկ 8 փէնս: Սովորական կշիւը պարթմանն է, որ նոյն չափը չունի ամէն տեղ, ինչու որ Թաւրիզի մէջ կը կշռէ 6 փաունտ, Գիլանի մէջ, ուր Շահ-Պարթման կը գործածեն, 12 փաունտ է, իսկ Շահ-Պարթմանի մէջ 16 փաունտ: Կը հաշուուի, որ Պարսկաստան իրարու վրայ տարին 10,000 սօմ, կամ 20,000 հակ մետաքս կ'արտադրէ, իւրաքանչիւր հակը 216 փաունտ կշռող: Լաւ տարիներուն Գիլանի նահանգը մինակ 8,000 հակ կ'արտադրէ, Շիրվան՝ 3,000, Սորասան՝ նոյնքան, Մաղանդերան՝ 2,000, Ղարապաղ՝ 2,000: Կ'ըսեն, թէ ամբողջ Պարսկաստան 1,000 հակ մետաքս աւելի չի սպառեր, թէ մնացեալը կը վաճառուի Թուրքիոյ, Հնդկաստանի, Իտալիոյ, Անգլիացոց եւ Հոլանտացոց, որոնք Հորմուզի մէջ առեւտուր